ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 24 հունվարի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով Մագդա Եղիազարյանի դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մագդա Եղիազարյանը 08.01.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, խնդրելով.

«1. ՀՀ Սահմանադրության 1, 3, 18, 19 եւ 83.5-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել «ՀՀ Վարչական դատավարության» օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի «խախտումից հետո» դրույթը:

2. ՀՀ Սահմանադրության 1, 3, 18, 19, 83.5-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել «ՀՀ Վարչական դատավարության» օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ, 140-րդ հոդվածի 1-3 մասերի «անվավեր ճանաչելու» դրույթները»:

Դիմողը գտնում է, որ գիտական եւ գիտատեխնիկական բնագավառում գործունեություն իրականացնող անձանց գործողությունների, ինչպես նաեւ դրանց որակավորման եւ դիպլոմավորման կարգը սահմանող օրինադրույթները, հստակ սահմանումներ չպարունակելով, առաջացնում են խոչընդոտներ, որն էլ թույլ է տալիս գործադրին կատարելու կամայական գործողություններ: Դիմողը նաեւ պնդում է, որ վեճի առարկան եւ իրավունքի խախտման պատճառը՝ անհատական իրավական ակտն

է և անձի խախտված իրավունքների պաշտպանության գործընթացի՝ որպես այդ ակտի ոչ իրավաչափ լինելու հետեւանք՝ դրա վերացման բացակայությունն է:

Դատական կազմը, ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործը սահմանադրական դատարանի կողմից պետք է քննության ընդունվի մասնակիորեն:

Վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի «խախտումից հետո» դրույթի մասով գործի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

1. Դիմողը, վիճարկելով նշված դրույթի սահմանադրականությունը, չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ դրա ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության պատշաճ հիմնավորում:

Դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

2. Դատական կազմը նաև կարծում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն դիմողը, վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանած իրավական դիրքորոշման, բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի

դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ կետով՝ դատական կազմը կարծում է, որ անհատական դիմումի հիման վրա, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի «խախտումից հետո» դրույթի մասով գործի քննությունը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, քանի որ.

- դիմումն ակնհայտ անհիմն է,
- դիմողը բարձրացրել է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց:

3. Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ եւ 140-րդ հոդվածի 1-3 մասերի «անվավեր ճանաչելու» մասով դրույթներին, ապա նշված իրավադրույթների կապակցությամբ դիմողը պնդում է, որ նորմատիվ իրավական ակտերի առոչինչությունը հաստատելու լիազորություն ՀՀ վարչական դատարանը չունի: Ընդ որում, անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի հիման վրա ընդունված և կատարված անհատական ակտերը վերանայման ենթակա չեն, ինչի պարագայում անձի իրավունքը, որը խախտվել է համապատասխան անհատական ակտի հիման վրա, շարունակում է մնալ խախտված, քանի որ վարչական դատարանը չունի նորմատիվ իրավական ակտի առոչինչ լինելը հաստատելու լիազորություն:

Դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի՝ «ՀՀ վարչական դատավարության» օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ եւ 140-րդ հոդվածի 1-3 մասերի «անվավեր ճանաչելու» մասով քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով և 69-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղաքացի Մազդա Եղիազարյանի անհատական դիմումով գործի ընդունումը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի «խախտումից հետո» դրույթի մասով մերժել:

2. Քաղաքացի Մագդա Եղիազարյանի անհատական դիմումով գործը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ եւ 140-րդ հոդվածի 1-3 մասերով ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող

Անդամներ

24 հունվարի 2014թ.

ՍԴԴԿՈ/1-3